

□□□□□□□ □□□□□□□□□ □□□□ *(«□□□□□□□□» 35-36, 11 □□□□□□□ 2013□.),* □□□□□□□□□ «□□□□□□□□□□» □□□□□□□□□□ □□□□□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□□ *170*□□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□□□□*,* □□□□□ □□□□□□□□□□ □□□□□ □□□□ □□□□ □□□□□□□□□ □□□□□□□ □□ □□□□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□ □□□□□□□□ □□□□□ □□□□□□□□□□□□□□□ □□□□□□ □□□□□□ □□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□□ □□ □□□□ □□□□□□□□□□□□□□ □□□□ □□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□*,* □□□□□□□□□ □□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□ □□□□□□□□□□□□□□□

Ընթերցողի սեղանին է դրված Վահե Անթանեսյանի «Միքայել Արամյանց. կյանքի եւ գործունեության դրվագներ» գիրքը: Ազատ շարադրանքի ոճով հեղինակը ձգտել է ներկայացնել դրվագներ Միքայել Արամյանցի կյանքից ու գործունեությունից: Ցավոք, այնպես է ստացվել, որ մինչեւ այժմ մենք որեւէ հիմնարար եւ ամբողջական ուսումնասիրություն չունենք մեր ժողովրդի արժանավոր զավակներից մեկի՝ մեծ գործարար եւ բարերար Միքայել Արամյանցի մասին:
Այս բացը լրացնելու փորձ է արել Վահե Անթանեսյանը՝ օգտագործելով արխիվային նյութեր, դիմելով ժամանակի կենսագիրներին, մասնավորապես՝ Գրիգոր ավագ քահանա Մանդակունու «Ոսկի բարեկամ հայ ընտանեաց» աշխատությանը: Բազմաթիվ տեղեկություններ քաղված են ժամանակի մամուլից: Սրանք են հիմնական աղբյուրները, մանավանդ, որ այդ ժամանակ ձեւավորված սկզբունք է գործել՝ չբարձրաձայնել, չթմբկահարել բարեգործությունը, այլ հնարավորինս աննկատ մնալ, ասելով, որ բարեգործությունը պետք է միայն բարձրյալին հայտնի լինի: Թերեւս այդ պատճառով մինչ այսօր էլ Միքայել Արամյանցի բազմաթիվ բարեգործություններ այդպես էլ անհայտ են մնացել: Բայց հայ մեծ բարեգործների համար դա չէր կարեւորը, այլ մարդկանց օգնության ձեռք մեկնելը, հասարակության կենսագործության համար կարեւոր մարմինների բնականոն ընթացքին աջակցելը: Եթե անգամ այս առումով դիտարկենք հեղինակի հավաքած նյութերը, ապա կտեսնենք Միքայել Արամյանցի բարեգործության լայն շրջանակը եւ նրա գործուն, կոնկրետ եւ հասցեական քայլերը:
Միքայել Արամյանցի նման մարդ-անհատականությունը չէր կարող անտարբեր լինել իր համար այնքան սիրելի քաղաքի՝ Թիֆլիսի հիմնախնդիրների նկատմամբ: Նա չէր կարող չհասկանալ, որ ազգային մարմինների բնականոն գործունեության համար ներդրումներ են պետք, եւ դա պետք է անեն հենց իրենք՝ գործարար-բարեգործները, բարերարները: Ինչպես վկայում են ժամանակակիցները՝ նա երբեք իրեն հեռու չդրեց նաեւ ազգային խնդիրներից ու ցավերից, ընդհակառակը, դրան ծառայեցրեց իր ունեցածը: Այս ամենը հստակ, կարմիր թելի պես անցնում է Վահե Անթանեսյանի կողմից ներկայացվող շարադրանքում: Հեղինակը կարողացել է փնտրել, գտնել տարբեր նյութեր, նամակներ, փաստաթղթեր, որոնք բնութագրում են նաեւ Միքայել Արամյանց մարդուն, ներկայացնում նրա ապրումներն ու հույզերը: Այս առումով հատկանշական են նրա նամակները՝ ուղղված դստերը՝ Աննային եւ փեսային՝ Հովհաննես Ղորղանյանին: Այստեղ վեր է հառնում մեծ հայը իր ողջ էությամբ՝

մարդասիրությամբ, հոգեկան խռովքով, ծնողական ջերմ վերաբերմունքով, հայրենասիրությամբ: Ի դեպ՝ նա այն մեծահարուստներից ու բարերարներից էր, ով հավատում էր խորհրդային իշխանությանը, սակայն նա հուսախաբ եղած ու խռոված 1922 թվականի դեկտեմբերի 18-ի լույս 19-ի գիշերը հրաժեշտ տվեց այս աշխարհին: Բայց ինչպես հեղինակն է ընդգծում, նա թողեց բարի անուն, առնվազն մի իր նմանը չունեցող առողջապահական հիմնարկ, որը Վրաստանի մայրաքաղաքում սերնդից սերունդ փոխանցվում է որպես «Արամյանցի հիվանդանոց»:
Գրքում ջերմություն ու անկեղծություն, ուշագրավ դիտարկումներ եւ մտորումներ կան: Տեղ են գտել լուսանկարներ, որոնք ներկայացնում են Միքայել Արամյանցի ընտանիքը եւ մերձավորներին:
Այս լուսանկարների մեծ մասը արվել են Թիֆլիսից 80 կմ հեռավորության գտնվող, մինչեւ Ալավերդի չհասած, Ախթալայի կալվածքում, ուր սիրում էր լինել Միքայել Արամյանցը՝ իր ընտանիքի անդամների հետ:
Հեղինակը պատմում է, որ Միքայել Արամյանցը Լոռվա աշխարհի այս գողտրիկ վայրում մի իսկական «Հայկական Շվեյցարիա» էր ստեղծել եւ մեծ սիրով հյուրընկալում էր ազգի մեծերին: Եվ ոչ միայն նրանց: Ժամանակի աղբյուրները վկայում են, որ այստեղ են եղել Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը, Ալեքսանդր Մանթաշյանցը, Հովհաննես Թումանյանը, Ալեքսանդր Շիրվանզադեն, Վարդգես Սուրենյանցը, Ֆեոդոր Շալյապինը, վրաց մեծահարուստներ եւ շատ ուրիշներ:
Անթանեսյանի վկայությամբ՝ նա մեծ սեր ուներ այս բնաշխարհի նկատմամբ: Այնպես էր ստացվել, որ նրա կյանքի եւ գործունեության հիմնական քաղաքները Թիֆլիսն ու Բաքուն էին դարձել, եւ նա մեծ կարոտ ուներ Հայաստանի նկատմամբ: Դա դրսեւորվեց նաեւ Ախթալայի կալվածքի ձեռքբերմամբ եւ Հաղբատավանքի կալվածքների՝ Հայ Առաքելական եկեղեցուն վերադարձով: Միքայել Արամյանցը, այս կալվածքներում օգնության ձեռք է մեկնում տեղի բնակչությանը՝ երեխաների համար դպրոցներ կառուցելով, սերմացու, աշխատանքային գործիքներ բաժանելով տարածաշրջանի գյուղերի բնակիչներին: Այդ տարիներին Ախթալայում եւ շրջակա վայրերում ապաստան էր տալիս նոր սկսվող եղեռնից արդեն մազապուրծ եղած եւ այդ տարիներին «տաճկահայ փախստականներ» անունն ստացած մարդկանց: Նրանց համար տներ էր կառուցում, անգամ փոքրիկ բնակավայրեր:
Օգտվելով առիթից՝ ուզում եմ եւս մեկ անգամ ողջունել նման գրքի ծնունդը, ասելով, որ այս գործը պետք է շարունակել: Պետք է ծնվեն գրքեր, ուսումնասիրություններ այն մարդկանց կյանքի եւ գործունեության մասին, ովքեր բարի հետք են թողել մարդասիրության ասպարեզում եւ մինչեւ այժմ էլ սերնդեսերունդ խոսում են այդ մասին: Երբ մենք տեսաֆիլմ էինք նկարահանում Թբիլիսիում, կենտրոնական փողոցներում նաեւ տեսահարցախույզ անցկացրինք, թե ի՞նչ գիտեն Միքայել Արամյանցի մասին: Մեր բոլոր ավագ զրուցակիցները հիշում էին նրա բարեգործության մասին, ձգտում ինչ-որ բան մտաբերել նրա կյանքից, անգամ լեգենդներ պատմել: Պետք էր տեսնել այն ոգեւորությունը, երբ լսում էին մեծ բարերարի մասին: Եվ կարեւոր չէր, թե ովքեր էին ազգությամբ: Թբիլիսիում մեզ տարբեր հետաքրքիր պատմություններ էին ներկայացնում ինչպես Միքայել Արամյանցի եւ Ալեքսանդր Մանթաշյանցի, այնպես էլ մեր մյուս հայ մեծահարուստների մասին: Նրանք ընդգծում էին, որ Թիֆլիսը Թիֆլիս չի լինի, եթե նրանից ոգին չփոխանցվի սերնդեսերունդ: Եվ կուզենային, որ նոր, մատաղ սերունդը ավելի ու ավելի շատ բան իմանար նրանց մասին: Ցավոք, հարցախույզի ժամանակ երիտասարդները քիչ էին հիշում մեծ բարերարին: Այս խնդիրը հրատապ է նաեւ մեզ համար՝ մենք պետք է կարողանանք մեր երիտասարդներին փոխանցել տեղեկություններ այդ մարդկանց գործի, նրանց վեհ հոգու, կատարած բարեգործությունների մասին: Դրան հասնելու համար տարբեր ճանապարհներ կան: Թերեւս

այդ գործին նպաստած կլինենք, եթե տարեկան մեկ անգամ նշենք «Բարերարի օրը» եւ հիշենք իրենց բարի գործերով: Այս ճանապարհին կարեւոր քայլ է կատարված սփյուռքի նախարարության կողմից. քաղաքամայր Երեւանում ստեղծվել է բարերարների ճեմուղին՝ հայ երեւելի գործարարների կիսանդրիներով: Նման քայլերն ավելի ու ավելի շատ պետք է լինեն: Անկասկած իրազեկման խնդիր գոյություն ունի: Չպետք է մոռանալ այդ մարդկանց հոբելյանները, ինչը թույլ կտա եւս մեկ անգամ վերադառնալ մեր ակունքներին: Չէ՞ որ մեր անվանի մեծահարուստները եւ բարերարները երբեք չկտրվեցին իրենց ակունքներից: Ընդհակառակը, ձգտեցին միշտ կենսունակ պահել այդ ամենը: Ընդհանրապես, նրանց նվիրված ուսումնասիրությունների պակաս կա:
Առիթն օգտագործենք եւ ոչ միայն ողջունենք գրքի հրատարակությունը, այլ ասենք. «Ծնունդդ շնորհավոր, մեծ հայ Միքայել Արամյանց, 170 տարեկան դարձար»:

□□□□□ □□□□□□□□
□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□,□□□□□□□□□